

ՊԱՏՎԱՍՏԱՆՅՈՒԹԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐ

RSV-ի (շնչառական սինցիտիալ վիրուսի) դեմ պատվաստանյութ. *Ի՞նչ է Ձեզ անհրաժեշտ իմանալ*

Many Vaccine Information Statements are available in Armenian and other languages. See www.immunize.org/vis

Պատվաստանյութի վերաբերյալ շատ տեղեկատվական նյութեր հասանելի են հայերենով և այլ լեզուներով: Տե՛ս www.immunize.org/vis կայքը

1. Ինչո՞ւ պատվաստվել:

RSV-ի դեմ պատվաստանյութը կարող է կանխել ստորին շնչուղիների հիվանդությունը, որն առաջանում է **շնչառական սինցիտիալ վիրուսից (Respiratory Syncytial Virus, RSV)**: RSV-ն տարածված շնչառական վիրուս է, որը սովորաբար առաջացնում է թեթև, մրսաձուլու հիշեցնող ախտանիշներ:

RSV-ն սովորաբար փոխանցվում է վարակի հետ անմիջական շփման միջոցով, օրինակ՝ այլ անձի հազի կամ փոշտոցի կաթիլները Ձեր աչքերին, քթին կամ բերանին հայտնվելու դեպքում: Դրանով կարելի է վարակվել՝ նաև դիպչելով մի մակերեսի, որի վրա վարակ կա, օրինակ՝ դռան բռնակին, այնուհետև դիպչելով դեմքին՝ նախքան ձեռքերը լվանալը:

RSV-ն կարող է հիվանդություն առաջացնել բոլոր տարիքի մարդկանց մոտ, սակայն կարող է հատկապես լուրջ լինել նորածինների և մեծահասակների համար: Նորածիններն ու քրոնիկ հիվանդություններով տարեցները, ինչպիսիք են սրտի կամ թոքերի հիվանդությունները, թուլացած իմունային համակարգը, կամ ուլքեր ապրում են ծերանոցներում կամ երկարատև խնամքի հաստատություններում, գտնվում են RSV-ից առաջացած լուրջ հիվանդությունների և բարդությունների ամենաբարձր ռիսկի տակ:

RSV վարակի ախտանիշները կարող են ներառել հարբուխ, ախորժակի անկում, հազ, փոշտոց, ջերմություն կամ խզզոցով շնչառություն: Մարդկանց մեծամասնությունը առողջանում է մեկ կամ երկու շաբաթվա ընթացքում, սակայն RSV-ն կարող է լուրջ լինել՝ հանգեցնելով շնչարգելության և թթվածնի ցածր մակարդակի: RSV-ն երբեմն կարող է հանգեցնել նաև այլ հիվանդությունների վատթարացման, ինչպիսիք են՝ ասթման, թոքերի քրոնիկ օբստրուկտիվ հիվանդությունը (թոքերի քրոնիկ հիվանդություն, որը դժվարացնում է շնչելը) կամ կանգային սրտային անբավարարությունը (երբ սիրտը չի կարողանում բավարար քանակությամբ արյուն և թթվածին մղել մարմնով մեկ):

Տարեցները և նորածինները, ուլքեր ծանր հիվանդացել են RSV-ով, կարող են հոսպիտալացման կարիք ունենալ: Ունակը նույնիսկ կարող են մահանալ:

Respiratory Syncytial Virus (RSV) VIS - Armenian (7/24/23)

2. RSV-ի դեմ պատվաստանյութ

CDC-ն 60 տարեկան և ավելի բարձր տարիքի **մեծահասակներին խորհուրդ է տալիս** RSV-ի դեմ պատվաստանյութի մեկ չափաբաժին ստանալ՝ հիմնվելով հիվանդի և բժշկական ծառայությունների մատակարարի միջև քննարկումների վրա:

RSV-ի դեմ պատվաստանյութը կարող է ներարկվել այլ պատվաստանյութերի հետ միաժամանակ:

3. Խոսեք Ձեր բժշկական ծառայությունների մատակարարի հետ

Ձեր պատվաստումների ծառայությունների մատակարարին տեղեկացրեք, եթե պատվաստանյութ ստացող անձը.

- **Ալերգիկ ռեակցիա է ունեցել RSV-ի դեմ պատվաստանյութի նախորդ դեղաչափից հետո**, կամ որևէ **լուրջ, կյանքին սպառնացող ալերգիաներ ունի**

Որոշ դեպքերում Ձեր բժշկական ծառայությունների մատակարարը կարող է որոշել հետաձգել RSV-ի դեմ պատվաստումը մինչև հաջորդ այցը:

Թեթև հիվանդություններ, ինչպես օրինակ, մրսաձուլու ռևեցող անձինք, կարող են պատվաստվել: Անձինք, ուլքեր չափավոր կամ ծանր հիվանդ են, սովորաբար պետք է սպասեն մինչև կազդուրվելը՝ նախքան RSV-ի պատվաստանյութ ստանալը:

Ձեր բժիշկը Ձեզ կարող է հավելյալ տեղեկություններ տալ:



U.S. Department of Health and Human Services
Centers for Disease Control and Prevention

4. Պատվաստանյութից առաջացող ռեակցիաների ռիսկերը

- RSV-ի դեմ պատվաստումից հետո կարող է առաջանալ ցավ, կարմրություն և այտուցվածություն ներարկման հատվածում, հոգևածություն (հոգևածության զգացում), ջերմություն, գլխացավ, սրտխառնոց, փորլուծություն և մկանների կամ հոդերի ցավ:

Կլինիկական փորձարկումներում RSV-ի դեմ պատվաստումից հետո շատ հազվադեպ են արձանագրվել լուրջ նյարդաբանական հիվանդություններ՝ ներառյալ Գիլյեն-Բարրեի համախտանիշը (Guillain-Barré Syndrome, GBS): Անհասկանալի է, թե արդյոք պատվաստանյութն է առաջացրել այս երևույթները:

Մարդիկ երբեմն ուշագնաց են լինում բուժօգործողություններից հետո՝ ներառյալ պատվաստումը: Ձեր բժշկին հայտնեք, եթե թեթև գլխապտույտ կամ տեսողության փոփոխություն ունեք կամ ականջներում զնգոց եք զգում:

Ինչպես ցանկացած դեղամիջոցի դեպքում, շատ փոքր հավանականություն կա, որ պատվաստանյութը լուրջ ավերգիկ ռեակցիայի, այլ լուրջ փասսվածքի կամ մահվան պատճառ կհանդիսանա:

5. Ի՞նչ անել լուրջ խնդրի դեպքում:

Ալերգիկ ռեակցիա կարող է առաջանալ, երբ պատվաստված անձը հեռանա կլինիկայից: Եթե լուրջ ալերգիկ ռեակցիայի նշաններ (եղնջատենդ, դեմքի և կոկորդի այտուցվածություն, դժվարացած շնչառություն, արագ սրտխփոց, գլխապտույտ կամ թուլություն) եք նկատում, զանգահարեք 9-1-1 և տվյալ անձին մոտակա հիվանդանոց տարեք:

Ձեզ մտահոգող այլ նշանների դեպքում զանգահարեք Ձեր բժշկական ծառայությունների մատակարարին:

Անբարենպաստ ռեակցիաների մասին պետք է հայտնել Պատվաստանյութերի անբարենպաստ երևույթների վերաբերյալ հաշվետվությունների համակարգին (Vaccine Adverse Event Reporting System, VAERS): Սովորաբար այս հաշվետվությունը կներկայացնի Ձեր բժշկական ծառայությունների մատակարարը կամ դա կարող եք ինքներդ անել: Այցելեք VAERS-ի կայքէջ՝ www.vaers.hhs.gov, կամ զանգահարեք 1-800-822-7967 հեռախոսահամարով: *VAERS-ը միայն ռեակցիաների մասին հաղորդելու համար է, իսկ VAERS-ի անձնակազմի անդամները բժշկական խորհրդատվություն չեն տրամադրում:*

6. Ինչպե՞ս կարող եմ ավելիս իմանալ:

- Դիմեք Ձեր բժշկական ծառայությունների մատակարարին:
- Չանգահարեք Ձեր՝ տեղական կամ նահանգային առողջապահության վարչություն:
- Այցելեք Սննդամթերքի և դեղորայքի վարչության (Food and Drug Administration, FDA) կայքէջ պատվաստանյութի փաթեթավորման ներդիրների և լրացուցիչ տեղեկությունների համար՝ www.fda.gov/vaccines-blood-biologics/vaccines
- Կապվեք Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման կենտրոնների (Centers for Disease Control and Prevention, CDC) հետ՝
 - Չանգահարեք 1-800-232-4636 (1-800-CDC-INFO) հեռախոսահամարով կամ
 - Այցելեք CDC-ի կայքէջ՝ www.cdc.gov/vaccines:

Armenian translation provided by Immunize.org

